

**Հ Ա Ն Գ Ի Ս Տ**  
**Օ Ր Դ ՝ Ա Ղ Ա Ի Ն Ի Հ Ա Ճ Ե Ա Ն Ի**  
(1914 — 1965)

Նրաւազէլի հայ գաղութը դժբախտութիւնն ունեցաւ 13 Օգոստոսի Ուրբաթ երեկոյեան կորսնցնելու՝ իր բազմալատասակ մանկավարժներէն մին՝ յանձինս Օրդ. Աղաւնի Հանեանի:

Յուզարկաւորութիւնը կատարուեցաւ յաջորդ յետմիջօրէին, Ս. Յակոբեանց Միաբանութեան եւ խումբ բազմութեան մը մերկայութեամբ: Դամբանական խօսեցաւ Լուսաբարապետ Գեորգ. Տ. Հայրիկ Արքեպս. Ասլանեան, որ լայն գիծերով վեր հանեց հանգուցեալին արժանիքներն ու վաստակը:

Մնած 1914-ին Աֆիւն Գարահիսարի մէջ, Զինադադարի տարիներէն ետք 1924-ին կը հաստատուի Նրաւազէլ: 1933-ին պաշտօնի կը կոչուի Ս. Թարգմանչաց Վարժարանին մէջ: Աւելի ուշ, երկու տարուան համար ուսուցչական պաշտօնով կը զրկուի Հայփա:

Օրդ. Հանեան իր համեստ ու ազնիւ նկարագրով, մանուկներու հոգեբանութեան թափանցելու եւ անոնց հետ որպէս մայր վարուելու ներծին կառուութեամբ, իր տւելի քան երեսուն տարիներու պաշտօնավարութեան ընթացքին յարատեւ վայելեց սէրն ու յարգանքը բոլոր աշակերտներուն:

Երկնային խաղաղութիւն իր ազնիւ հոգիին եւ Աստուծոյ մխիթարութիւնը հանգուցեալի պարգաւներուն:

**Հ Ա Ն Գ Ի Ս Տ**  
**Ս Ի Ր Ա Կ Ա Ն Գ Ա Ս Ա Պ Ե Ա Ն Ի**  
(1907 — 1965)

Ս. Յակոբեանց Միաբանութիւնն ու պաշտօնէութիւնը ցատկ լսեցին Ս. Աթոռի երկարամեայ պաշտօնեայ Սիրական Գասապեանի մահը, որ տեղի ունեցած էր 3 Օգոստոս 1965, առաւօտեան ժամը 7.30-ին, Պէշքաւթի մէջ. երկարատեւ հիւանդութենէ մը ետք:

Ան տւելի քան երեսուն տարիներ, առանց ընդմիջման եւ մեծ նուիրումով ծառայած էր Ս. Յակոբեանց Մայրավանքին՝ որպէս Պատրիարքական ինքնաշարժի շարժավար, Երբնկ. Թորգոմ, Մեսրոպ եւ Կիրեզ հոգեւոյս Պատրիարքներու սենեկապան եւ Վանքի ելեկտրական գործերու պատասխանատու:

Մնած 1907-ին՝ Զէյթուն, տարագրութեան կը կորսնցնէ իր հայրը, եւ մօրը կոզմէ կը դրուի Մարաշի որբանոցը: 1924-ին կ'անցնի Նրաւազէլ եւ 1932-ին կ'ընդունուի որպէս շարժավար Պատրիարքի:

Սիրական Գասապեան իր մահէն մինչեւ քանի մը ամիս առաջ տակաւին իր պաշտօնին վրայ էր, միշտ պատրաստակամ, միշտ գործունեայ եւ միշտ սիրալիր բոլորին հանդէպ:

Իր մահով Ս. Յակոբեանց Մայրավանքը կը կորսնցնէ անձնագոհ, հաստարիւմ եւ համեստ պաշտօնեայ մը, որ իր անշահախնդիր ծառայութիւններով, թէեւ աշխարհական՝ բոլորիս համար կը նկատուէր մէկ անդամը Ս. Աթոռի Միաբանութեան:

Երկնային հանգիստ իր ազնիւ հոգիին եւ Աստուծոյ մխիթարութիւնը իր այրի տիկնոջ, գաւակներուն եւ պարգաւներուն: